

Մայիս 28ի Առթիւ Խրախճանք Պարահանդէս

27 Մայիս 2006
Հայֆա

Որոշուած էր տարւոյս Մայիս 28ի պարահանդէս-տօնախմբութիւնը անցկացնել Հայֆայի մէջ: Հետեւաբար, Հայֆայի Հ.Ս.Ը.Մ.ի մասնաճիւղի բոլորովին նորընտիր թէ նորակազմ վարչութիւնը, գործի էր լծուած, ընդունելութեան ճոխ սրահ էր վարցած, Երուսաղէմէն սիրուած երգիչ Կարօն էր հրաւիրած, վիճակահանութեան թանկ նուէրներ էր ապահոված վերջապէս օրուան պատշաճ նշման ամէն պատրաստութիւն էր ընդգրկուած:

Արդարեւ, մենք, 2 տասնեակ Երուսաղէմացի Հ.Ս.Ը.Մ.ականներ օթօպիւս բարձրաձանք ու որոշեալ ժամուն ժամանեցինք սրահ, որը շուտով նեղ եղաւ ներկաների համար ու առաւել քանի մը սեղաններ յարմարցնելու յարկ ստեղծուեցաւ:

Ժամը 9ին, երգիչ Կարօի ազդանշանի վրայ ժողովուրդը յոտնկայս միացաւ «Մեր Հայրենիք» երգեցողութեամբ, որուն հետեւեցաւ Հայֆայի մասնաճիւղի ատենապետի 'բարի եկաքը' ապա Երուսաղէմի Հ.Ս.Ը.Մ.ի ատենապետ եղբ. Սերոբ Սահակեանի օրուան առթիւ խօսքը ու շրջանի հովիւ Հայր Աւետիս Իփրաճեանի օրհնութիւնները:

Բարձր թէ ճոխ տրամադրութիւնը տիրապետեց սրահը մինչեւ խրախճանքի կէս գիշեր անց աւարտը դառնալով նորընտիր վարչականներու խանդաւարիչ ու մղիչ ուժը առաւել գործունէութեանց նախաձեռնութեան: